

A 12.00.02
Ք - 79

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Թովմապան Հրայր Վարդանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ
ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ

ԺԲ. 00 02 «Հանրային իրավունք (սահմանադրական իրավունք, վարչական իրավունք,
ֆինանսական իրավունք)» մասնագիտությամբ

Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտակցւն աստիճանի ատենախոսության
սնդագիր

ԵՐԵՎԱՆ - 2000թ.

Ատենախոսության թման հաստատվել է ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝
իրավաբանական գիտությունների դոկտոր

Հենրիկ Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր
իրավաբանական գիտությունների թեկնածու

Վ. Նազարյան
Ռ. Եղյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարման դպրոց

Պաշտպանությունը կայանալու է 2000 թ. հունիսի 1-ին, ժամը 10. 30-ին

Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՒՀ-ի իրավաբանական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող 001 մասնագիտական խորհրդի նիստում (375049, Երևան-49, Ա. Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտաշխատողների ընթերցանարանում



1953-2000

Մեղմնագիրն առաքված է 2000թ. հունիսի 1-ին

Մասնագիտական խորհրդի քարտուղար՝
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Handwritten signature

Ա. Գարուգյան

1. Ուսումնասիրության թեմայի հրատարակությունը: Հազվի՜ թե անհրաժեշտություն կա դատողությունների և տեսական արտածումների միջոցով հիմնավորելու ընտրական իրավունքի կարևորությունն արդի ժամանակաշրջանում: Ասվածը, թերևս, հավասարապես կարող էր տարածվել ընտրական իրավունքի առաջացումից ի վեր, բոլոր ժամանակաշրջանների վրա: Այնուամենայնիվ, այսօր այն Հայաստանի Հանրապետությունում ավելի է իմաստավորվում, քանզի յոթանասունամյա քաղաքական լծաբազիկական քնից հետո, նգակի հնարավորություն է ստեղծվել ժողովրդավարության և քաղաքական ազատությունների ծավալման ու զարգացման համար: Որոշ իմաստով կարելի է ասել, որ ընտրական իրավունքը ձեռք է բերել սուբստանցիոնալ նշանակություն ժողովրդավարական մյուս ինստիտուտների ձևավորման համար: Իսկ վերջիններս դեռևս գտնվում են սաղմնային ձևավորման փուլում: Այս իրավիճակի տեսական վերլուծությունը, բնութագրող, առավել ևս զարգացման հեռանկարները ներկայացնելն անհնար է, առանց իշխանությունների ձևավորման հարցում ընտրությունների նշանակության իմացության, քաղաքական համակարգում և քաղաքական իրավունքների համակարգում ընտրական իրավունքի տեղի ու դերի, ընտրությունների բուն գործընթացում գործող մեխանիզմների, տարբեր օղակների փոխհարաբերությունների, դրանցում առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունների, ինչպես նաև վերջիններիցս ձևաբազատվելու հնարավորությունների բացահայտման:

Թե՛ ընտրական իրավունքը և թե՛ վերը շարադրված հարցադրումները նոր շնն: Իրավական մշակույթում այս խնդիրների արծարծումն արտացոլվել է դեռևս անտիկ աշխարհում: Սակայն դրանք խիստ պատմական բնույթ ունեն և տարբեր դարաշրջաններում տարբեր լուծումներ են ստացել՝ տվյալ ժամանակի հասարակական հարաբերություններին, աշխարհայացքին, իրավաբանական մշակույթի մակարդակին բնույթ չափանիշներով: Սա թերևս պայմանավորված է նաև նրանով, որ ընտրական իրավունքը հասարակության զարգացման յոթաբանյուր փուլում որոշակի կոնկրետ առաքելություն և դրսևորում է ունեցել:

Ընտրական իրավունքի առանձնահատուկ ընկալումից զերծ չէ նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությունը, որտեղ արտահայտված ձևով դրսևորվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխարհաքաղաքական դիրքը, իրավաքաղաքական մշակույթը, սոցիալ-անտեսաբան առկա իրավիճակը, ազգային հոգեբանությունը, բարոյականությունը, մտածելակերպը և այլն: Վերջիններս սոցիալ-հասարակական կյանքի փոփոխման հետ վերափոխվում ու զարգանում են, դրանով իսկ հրամայական դարձնում ընտրական իրավունքին նորովի մոտենալու և մեկնաբանելու պահանջը: Նախընթաց տարիներին Հայաստանում անցկացված ընտրությունների փորձն անվերապահորեն փաստում է ընտրական իրավունքի և, հատկապես, այդ իրավունքի իրականացման գիտական վերլուծության և դրան ժողովրդավարական լուծումներ տալու անհրաժեշտությունը:

2. Հնտագնությունը և նպատակը և խնդիրները: Ատենախոսությունը բնավ իր առջև չի դնում բոլոր ժամանակների համար ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերի ունիվերսալ ու վերջնական մշակման գլոբալ խնդիր: Ենթադրվում է սուկ իմի բերել վերը նշված հարցերի մասին միջազգային փորձը, տնտեսական ընդհանրացումները և կառուցել մեզանում դրանց իրականացման տեղայնացված նախնական, համեմատաբար ընդունելի մոդել:

Դրա իրականացման ճանապարհին կարևորվում են հետևյալ խնդիրները՝

- ժողովրդավարական գործընթացում քաղաքական համակարգի և նրա ձևավորման գործում ընտրական իրավունքի ու ընտրական համակարգի տեղի ու դերի հստակեցումը:

- ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու նպատակով ընտրական իրավունքի իրականացման ոլորտում առկա հիմնահարցերի վերլուծությունն ու դրանց հնարավոր լուծումներ տալը:

- հաշվի առնելով Հայաստանի, հայ ժողովրդի ազգային ասանձնահատկությունները, այնպիսի ընտրական համակարգի մշակումը, որը հնարավորություն կընձեռի իշխանության տարբեր թևերի տարանջատ, հակակշիռ, հավասարակշիռ գործունեության համար:

- ընտրական հանձնաժողովների որպես քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ու պաշտպանությունն ապահովող մարմինների, գործը պատշաճ իրականացնելու նպատակով, իրավասության շրջանակի հստակեցում:

- ընտրական իրավունքի պաշտպանության համար իրական գործող մեխանիզմների սահմանում:

- ընտրական քաղաքականության հստակեցում:

3. Գիտական նորույթը: Ատենախոսությունում հիմնավորվում են ընտրական իրավունքի հետևյալ որակումները՝

- քաղաքական համակարգի զարգացման այս աստիճանում ընտրական իրավունքն Եվակետային դեր ու նշանակություն է ձեռք բերում այդ համակարգի մյուս ինստիտուտների համար:

- ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերի լուծումը հնարավոր է միայն օրենսդրորեն մանրակրկիտ կարգավորված ընտրական մեխանիզմների օգնությամբ:

- համընդհանուր կարելի է համարել այն ընտրական իրավունքը, որն Երկրի չափահաս քաղաքացիներին, բացառյալ դատական կարգով անգործունակ ճանաչվածների, ոչ միայն իրավունք, այլև իրական հնարավորություն է ընձեռում մասնակցելու պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Եթե ընտրություններին չմասնակցող քաղաքացիների թիվը պարբերաբար մեծ տոկոսը է կազմում, ապա ոտնու հարվում է ընտրական իրավունքի համընդհանրության սկզբունքը:

- ընտրական իրավունքի անկատարությունը վկայում է պետության քաղաքական կյանքից ու կառավարումից քաղաքացիների մեկուսացման մասին:

- ազատ և արդար ընտրություններ անցկացնելու համար կարևոր նախապայման են հանդիսանում բարձր քաղաքական ու իրավական մշակույթը և իշխանությունների կամքը:

- ընտրական իրավունքը կարող է իր սոցիալական ու քաղաքական առաքելությունը կատարել, եթե այն իրականացվում է մրցակցության և այլընտրանքի պայմաններում:

- քաղաքացիների կամ քաղաքական կուսակցության աջակցություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իր պասսիվ ընտրական իրավունքը:

- նախընտրական քարոզչության իրավունքը որոշակիորեն պետք է դիտարկվի որպես ընտրական իրավունքի և քաղաքական քարոզչության բաղկացուցիչ մաս:

- ընտրական գրավը ոչ մի պարագայում չպետք է խոչընդոտ հանդիսանա քաղաքացիների պասսիվ ընտրական իրավունքի իրականացմանը, բարձր ընտրական գրավը կարող է որակվել որպես գոյքային ցեղ:

- ընտրական հանձնաժողովների համակարգի միջոցով քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը ոչ թե կուսակցությունների, այլ պետության պարտավանդությունն է, հետևաբար ընտրությունների կազմակերպման և անցկացման պատշաճ մակարդակի համար պետք է պատասխանատվություն կրի պետությունը:

- ընտրական իրավունքի իրականացման շատ խնդիրներ ուղղակիորեն կապված են այդ իրավունքի ապահովման նրաշխիքների հետ, ընդ որում, ընտրական իրավունքի դատական պաշտպանությունն իրավունքի ապահովման կարևորագույն նրաշխիքն է:

4. Պաշտպանության ներկայացվող դրույթները: Հայաստանի Հանրապետությունում

համընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքը, պարբերաբար մրցակցության ու այլընտրանքի պայմաններում ազատ, արդար, չկեղծված ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը ժողովրդավարական հասարակության ձևավորման և գոյատևման կարևորագույն նախապայմանն է:

- ընտրական իրավունքը սուբստանցիոնալ նշանակություն ունի մյուս ժողովրդավարական ինստիտուտների համար:

- ընտրական իրավունքի իրականացման գործող մեխանիզմների բացակայության պայմաններում անհնար է ապահովել քաղաքացու լիարժեք մասնակցությունը պետության քաղաքական կյանքին ու կառավարմանը:

- համընդհանուր ընտրական իրավունքի ապահովման համար անհրաժեշտ է ոչ միայն դրա ամրագրումը, այլև ընտրություններին քաղաքացիների մասնակցությունն ապահովող գործող մեխանիզմների առկայությունը:

- չի կարելի ընտրական իրավունքը համարել համընդհանուր, եթե համապետական ու տեղական ընտրությունների ժամանակ արքունիկը պարբերաբար կազմում է մեծ տոկոս:

- արքունիկի հիմնահարցը որոշ առումով դուրս է ընտրական օրենսդրության շրջանակներից: Այն նվազեցնելու նախապայմաններից մեկը պատշաճ քաղաքական ու իրավական մշակույթն է, որի բարձրացման նպատակով անհրաժեշտ է ընդունել «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների ընտրական մշակույթի բարձրացման համապետական ծրագիր»:

- առանց ազատ նախընտրական քաղաքական պայմանների ապահովման չի կարելի խոսել ընտրական իրավունքի լիարժեք իրականացման մասին:

- մրցակցության և այլընտրանքի բացակայության պայմաններում անցկացվող ընտրությունները չեն կարող կատարել իրենց սոցիալական ու քաղաքական առաքելությունը, և դրա արդյունքում ձևավորված ցանկացած պետական ու ինքնակառավարման մարմին չի կարող արդյունավետ գործել:

- քաղաքացիների կամ կուսակցության աջակցությունն ունեցող յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իր պատիվ ընտրական իրավունքը: Օրենսդրությամբ սահմանված բարձր ընտրական գրավները կարելի է դիտարկել որպես գույքային ցնձ: Ընտրության ժամանակ ֆինանսական միջոցների շրջանառությունը պետք լինի բաց և վերահսկելի:

- ընտրական հանձնաժողովների կողմից քաղաքացիների ընտրական իրավունքն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել ընտրական հանձնաժողովների լիազորությունները, սահմանել նրանց կարգավիճակը /որոշ ստիժաններում/ որպես պրոֆեսիոնալ հիմունքներով մշտական գործող պետական մարմինների:

- ընտրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում, պետության կողմից իրականացվող պաշտպանությանը զուգահեռ սահմանել հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության ինստիտուտը:

5. Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը և փորձառական բազան: Ատենախոսության հիմքում ընկած են պետության և իրավունքի տեսության, սահմանադրության իրավունքի, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության ոլորտներում հրապարակված գիտական հետազոտություններ:

Կիրառվել է հետազոտման տարբեր մեթոդներ, մասնավորապես՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, համեմատական, իրավական:

Ուսումնասիրվել են ընտրական իրավունքի հիմնահարցերին նվիրված հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններ:

Հետազոտությունը հիմնված է Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան պիտությունների ընտրական օրենսդրության, խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փաստաթղթերի վերլուծության վրա:

6. Աշխատանքի գործնական նշանակությունը: Ատենախոսության մնջ տեղ գտած տեսական դրույթները և հատկապես գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել ինչպես իրավաստեղծ գործունեության ժամանակ, այնպես էլ համապատասխան պետական մարմինների իրավակիրառական պրակտիկայում և դրանով իսկ նպաստել ՀՀ իրավական համակարգի այդ ոլորտի զարգացմանը:

Ներկայացված նյութը կարող է օգտագործվել նաև ՀՀ սահմանադրական իրավունք և ընտրական իրավունք առարկաների դասավանդման ժամանակ:

7. Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը նախապատրաստվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում: Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները քննարկվել են Ժողովրդավարության միջազգային ինստիտուտի կողմից 1998 թվականի հունվարի 29-ից 31-ը Երևանում «Ընտրական համակարգեր, նոր ընտրական օրենսգրքի հիմնահարցեր» թեմայով կազմակերպված սեմինարում: Աշխատության հեղինակը փորձագետի կարգավիճակով մասնակցել է 1997 թվականի ԵՊՀ-ի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի կողմից կազմակերպված «ՀՀ ընտրական օրենսգրքի» նախագծերի քննարկմանը: 1997 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իր առաջարկություններով մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի պետական իրավական հարցերի մշտական հանձնաժողովում «Ընտրական օրենսգրքի» նախագծի նախապատրաստման աշխատանքներին: Հեղինակը «ՀՀ Ընտրական օրենսգրքի» նախագծի համահեղինակ է: Ատենախոսության որոշ գաղափարներ իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրապարակումներում:

8. Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (12 պարագրաֆներից), ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից:

9. Հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթների վերաբերյալ հեղինակի կողմից հրապարակվել է 3 հոդված:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (տասներկու պարագրաֆներից), ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է աշխատության թեմայի արդիականությունն ու գիտական նորությամբ, նշանակությունը, որոշարկվում են հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, առաջադրվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխի («Ընտրությունների և ընտրական իրավունքի դերը Հայաստանի Հանրապետությունում») նրկու պարագրաֆներում վերլուծվում է արդի փուլում Հայաստանի Հանրապետության քաղաքական զարգացման հնարավոր հեռանկարները և այդ գործընթացում ընտրությունների և ընտրական իրավունքի դերի հետ կապված հիմնական խնդիրները: Հաշվի առնելով ընտրությունների և նրկրի քաղաքական համակարգի ուղղակի կապը, առանձնակի ուշադրություն է հրավիրվում քաղաքական համակարգին, տրվում վերջինիս զարգացման հնարավոր և ցանկալի հեռանկարները: Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի առանձնահատկությունների շարքում ուշադրություն է հրավիրվում քաղաքական համակարգի անկայունությանը և քաղաքական համակարգում սուբյեկտիվիզմի ավելի քան նշանակալի դրսևորմանը:

Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունքի զարգացման ժամանակակից փուլին բնորոշ է անցումային բնույթը, երբ հին մոտեցումները, պատկերացումները պահպանում են իրենց ազդեցությունը ընտրությունների, ընտրական իրավունքի բնագավառում ստրատեգիական որոշումներ կայացնելու գործում: Առել է, թե հասարակության մեջ դեռևս կան ընտրական իրավունքի խնդրաշարժում, ընտրությունների իմիտացիայի միջոցով իշխանություններ ձևավորելու կողմնակիցներ: Հասարակության զարգացման մեր պայմաններում ընտրությունները որպես առկա քաղաքական տարբեր հոսանքների միջև հակամարտության լուծման քաղաքակիրթ եղանակ, կարող են մեղմել քաղաքական լարվածությունը:

Ընտրությունների դերակատարությունը մեզանում բազմակի անգամ ավելի մեծ է, քան որոշակի ժողովրդավարական ավանդույթներ ունեցող պետություններում: Եթե ժողովրդավարական պետությունում ընտրությունների դերը, ֆունկցիաները, խնդիրները ժամանակի ընթացքում որոշարկվել են / իշխանությունների լեգիտիմացում, քաղաքական էլիտայի ձևավորում, քաղաքական կուլտուրայի բարձրացում/, ապա վարչաձևային կառուցվածքի ժողովրդավարական համակարգի անցում կտարող Հայաստանում վերոնշյալ խնդիրները, ֆունկցիաները ոչ միայն նոր երանգ ու նշանակություն են ստանում, այլև դրանց ավելանում է ընտրությունների ու հասարակության յուրաքանչյուր անդամի բարեկեցության աստիճանի ուղղակի կապի գիտակցման արմատավորումը, մի խնդիր, որի լուծումից է թերևս կախված պետության կայունությունը, զարգացումը:

Հայաստանի Հանրապետությունը ապրում է զարգացման մի այնպիսի ժամանակաշրջան, երբ հասարակական գիտակցության մեջ պետք է փոխել իշխանության կերպարը: Հասարակության զարգացումը երաշխավորված կլինի այնքանով, որքանով նրա քաղաքական և քաղաքացիական կյանքում պարբերական խորհրդարանական,

նախագահական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը համընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, կղաճեա սոցիալական պահանջմունք: Ընտրությունները պետք է ձևավորեն այնպիսի գիտակցություն, որը հանրային իշխանությունները կդիտարկի որպես քաղաքացիական, քաղաքական ձեռքբերում: Չպետք է թույլ տալ, որ ընտրությունները մեզանում ձևական բնույթ ստանան, չպետք է թույլ տալ, որ արմատավորվի ոչ քաղաքական, այսինքն ընտրությունների արդյունքներով չփոփոխվող իշխանության գաղափարը: Միշտ էլ կհայտնվեն քաղաքացիների առջև անպատասխանատու, հասարակության և դատական իշխանության հակոդությունից դուրս գտնվող իշխանության կողմնակիցներ:

Հայաստանի Հանրապետությունն այսօր ունի նրկու ճանապարհ, կամ ընտրական իրավունքի ժողովրդավարական ընթացակարգերի միջոցով դուրս գալ աղաքական մեթոդներով իշխանության կազմակերպման փակ շրջանակից, կամ տարածել խմբակային մոդելով հանրային իշխանությունների ձևավորումը: Առաջին տարբերակը իրական հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին ապրել նորմալ ժողովրդավարական պետությունում, նորմալ պետաիրավական ինստիտուտների առկայության պայմաններում: Երկրորդ տարբերակը միանշանակորեն միտված է մի խումբ մարդկանց կողմից իրենց ցանկությունները մյուսներին պարտադրելու հեռանկարին: Այս հարցի լուծումն ուղղակիորեն կապված է հենց ընտրությունների հետ, ու թերևս դա է հիմնական պատճառը, որ չեն դադարում բանավեճերն ընտրական օրենսդրության շուրջը: Չայած այն հանգամանքին, որ ընտրությունը ժողովրդային իշխանության տարրակտն ձևերից մեկն է, հատկապես նրանում է կայանում ժողովրդավարության, որպես քաղաքական ազատությունների իրացման քաղաքացիական եղանակի իմաստը: Ընտրական իրավունքը հանդիսանում է այն բազային իրավաբանական կառուցվածքը, որի շրջանակներում և որի միջոցով տեղի է ունենում ժողովրդավարական պետության ձևավորումն ու կայացումը:

Հայաստանի Հանրապետությունում, որ պետական ու քաղաքական մյուս հիմնական ինստիտուտները խորհրդարան, դատական իշխանություն, գործադիր իշխանություն, քաղաքական կուսակցություններ/ գտնվում են դեռևս ձևավորման փուլում, երբ շարունակվում են բանավեճերն այս ինստիտուտների գործունեության առավել արդյունավետ ու ժողովրդավարական եղանակների ստեղծման շուրջ, ընտրական իրավունքը դառնում է այն ելակետային, վճռորոշ օղակը, որից սկիզբ են առնում մյուս բոլոր ժողովրդավարական ինստիտուտները: Պետք է հստակ հասկանալ, որ սկզբնական բջջի անառողջ լինելու դեպքում բարենպաստ հետևանքներ ակնկալելն անիմաստ է:

Առաջին գլխի նրկորդ պարագրաֆում որոշարկվում է ընտրական իրավունքի նշանակությունը քաղաքական իրավունքների սպեկտրում, վերլուծությունների միջոցով հիմնավորվում է մյուս քաղաքական իրավունքների իրականացման համար ընտրական իրավունքի նախապայման լինելու փաստը: Ընտրական իրավունքի բացակայության պայմաններում քաղաքական մյուս բոլոր իրավունքները մասնակիորեն կամ ամբողջությամբ իմաստազրկվում են: Պետության ներսում կառավարմանը մասնակցող տարբեր ինստիտուտների առկայության պայմաններում ևս ընտրական իրավունքն ու ընտրություններն ամենագանգվածայինն ու ամենաընդգրկունն են:

Երկրորդ գլուխը («Հ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը») բաղկացած 6 պարագրաֆից, ուղղված է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերի լուսաբանմանը: Աշխատության այս գլխում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի համընդհանրության, կամավորության, ազատության, մրցակցության սկզբունքների, ինչպես նաև թեկնածուների առաջադրման, ընտրությունների ֆինանսավորման և նախընտրական քարոզչության փուլում առկա հիմնական խնդիրները:

Ներկայացվում են համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի զարգացման փուլերը, Հայաստանի Հանրապետությունում վերջինիս ամրագրման պատմությունը: Հայաստանի Հանրապետությունում այս սկզբունքի ամրագրման, համար նախ և առաջ, անհրաժեշտ է կատարել որոշ օրենսդրական փոփոխություններ: Համընդհանրության սկզբունքը վերլուծելիս անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել նրկու հիմնահարցի վրա, որքանով է սյն ամրագրված, և որքանով է այն իրականացվում, միայն սկզբունքի ամրագրումը առանց լերջինիս իրագործման համար իրական գործող մեխանիզմների, բավարար չեն տվյալ պետության ընտրական իրավունքը համընդհանուր կոչելու համար: Այն պայմաններում երբ համապետական ընտրությունների ժամանակ ընտրական օրենսդրությունում ամրագրված մեխանիզմների անկատարության պատճառով պարբերաբար արքանտեղիվը մեծ տոկոս է կազմում, ապա այդ նրկում համընդհանուր ընտրական իրավունքը իրական չէ:

Ընտրությունների ազատությունն ուղղակի կապի մեջ է մարդու ազատության սկզբունքի հետ: Ընտրությունների ազատության սկզբունքից բխում է ընտրություններին մասնակցելու և այս կամ այն կերպ ընտրողին քվեարկելու հարկադրելու նրկայի բացառումը: Թանի որ ընտրությունների ազատությունն ուղակիորեն կապված է մարդու այլ իրավունքների հետ, ուստի միայն մարդու իրավունքների լայն սպեկտրի ամրագրման և պահպանման

պայմաններում անցկացվող ընտրությունները կարող են համարվել ազատ: Ըստ հեղինակի, ընտրությունների իրական ազատության պահպանման համար անհրաժեշտ է քաղաքական, քարոչառոգներանական այնպիսի մթնոլորտ, որտեղ ոչ ոք մտավախություն չի ունենա տվյալ պահին իշխանություն ունեցող քաղաքական ուժի դեմ քվեարկելու դեպքում հնարավոր հետապնդումների համար: Ընտրությունների ազատության իրականացման համար լավագույնն այն հասարակությունն է, որում ընտրական իրավունքը դիտարկվում է որպես քաղաքակրթության մեծագույն, անժեռնմխելի տոժը: Այս պարագրաֆում արծարծվող հաջորդ հիմնահարցը արքնտեղիվն է: Արքնտեղիվի մեծ աստիճանը խոսում է ինչպես օրենսդրության անկատարության, այնպես էլ քաղաքական համակարգի և ընտրվող մարմնի նկատմամբ անվստահության մասին: Պետության կարևորագույն խնդիրները մեկն է արքնտեղիվի փոքրացումը, սակայն անթույլատրելի է այն արքնտեղական ձևերով ու նղանակներով կատարելը: Մեզանում արքնտեղիվի փոքրացման նարտակով, թերևս, իմաստ ունի քվեարկության այլընտրանքային որոշ նղանակների ամրագրումը: Արքնտեղիվի պատճառները կարելի է քաժանել նրկու խմբի իրավական և քաղաքական: Երկրորդ խմբի պատճառների վերացումը ինչ-որ առումով դուրս է ընտրական օրենսդրությամբ լուծվող խնդիրների շրջանակից: Որպես արքնտեղիվի քաղաքական պատճառ, անհրաժեշտ է նշել ձևավորվող մարմնի՝ քաղաքական համակարգում ունեցած նրկորդական դերը:

Սույն գլխի հաջորդ պարագրաֆում քննության է առնվում ընտրությունների ժամանակ մրցակցության և այլընտրանքի հիմնահարցը: Վերջիններս Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում ընդամենը 8-10 տարվա պատմություն ունեն: Հեղինակի պնդմամբ, մրցակցության և այլընտրանքի բացակայության պայմաններում անցկացվող ցանկացած միջոցառում չի կարելի ընտրության անվանել, քանզի ընտրություններն, անգամ քաղաքական կոնտեքստից դուրս, նշանակում են միասնե մի քանի սուբեկտների առկայություն և ինչ-ինչ դրդապատճառներից նկնելով դրանցից որևիցե մեկին նախապատվություն տալու անհրաժեշտություն: Մրցակցության և այլընտրանքի բացակայության պայմաններում անցկացվող միջոցառումները հատուկ են ավտորիտար և տոտալիտար կառավարման համակարգ ունեցող պետություններին: Հեղինակի համոզմամբ, մրցակցության բացակայության դեպքում ընտրություններն անհրաժեշտ է հետաժգել մինչև վերջինիս ապահովումը: Մրցակցությունը մեր օրերում, նախ և առաջ, ժողովրդական ընտրություն-

ների հայտանիշ է: Վերջինիս բացակայությամբ, ձևավորված որևէ մարմին, հլասարակության մեջ չի կարող իրական դեր ու ազդեցություն ունենալ: Հայաստանի Հանրապետության նոր ընտրական օրենսդրությունը դրական առումով որոշակի տեղաշարժ կատարեց ընտրություններն այլընտրանքի և մրցակցության պայմաններում անցկացնելու ուղղությամբ:

Վիճակը բնավ չի մեղմվում կեղծ, ոչ իրական այլընտրանքի և մրցակցության պատրանքի ստեղծումով: Որոշ ընտրական համակարգերի պայմաններում, մրցակցության և այլընտրանքի բացակայությունը կարող է հանգեցնել ամբողջ համակարգի իմաստազրկմանը:

Սույն գլխի հաջորդ պարագրաֆում վերլուծվում է թեկնածուների առաջադրման խնդիրը: Առաջադրման սուբյեկտների որոշարկման, առաջին հայացքից ոչ այնքան կարևոր թվագող խնդիրը կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ ինչպես ընտրությունների արդյունքների, այնպես էլ քաղաքական համակարգի զարգացման վրա: Այս փուլում մշակված ընդհանուր մտացման իմաստը կայանում է նրանում, որ որոշակի քաղաքացիների, կամ քաղաքական միավորման աջակցություն ունեցող անձինք պետք է առաջադրվելու իրավունք ստանան: Ինչպես օրենսդրությունը, այնպես էլ որևէ պետական մարմին չպետք է արհեստական արգելքներ ստեղծեն թեկնածուների առաջադրման համար: Թեկնածուների առաջադրումը ոչ մի դեպքում չպետք է կախված լինի պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամքից:

Ուսումնասիրությունները վկայում են այս փուլում տարբեր ընտրությունների և տարբեր ընտրակարգերի համար միատեսակ դեղատոմսի բացակայության մասին: Թեկնածուների առաջադրման առանձին կարգեր առավել արդյունավետ կգործեն այս կամ այն ընտրակարգի պայմաններում:

Հայաստանի Հանրապետության պայմաններում որոշակի տեխնիկական խնդիրներ լուծելու պայմաններում համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ իմաստ ունի անցնելու ազատ ցուցակների:

Թեկնածուների առաջադրման փուլում մեր օրենսդրությամբ նախատեսված ստորագրահավաքները անհրաժեշտ հսկողական մեխանիզմների բացակայության պայմաններում արհեստական բնույթ են ստանում, ուստի հաշվի առնելով այս հանգամանքը, իմաստ ունի անցում կատարել, որոշ ընտրակարգերի պայմաններում, ինքնաառաջադրման, կամ ստորագրությունները փոխարինել կտրոններով, որոնք ընտրողներին կբաժանվեն յուրաքանչյուր ընտրությունից առաջ:

Քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերի շարքում իրենց արությանը առանձնանում են նախընտրական քարոզչության փուլի օրենսդրական մանրակրկիտ կարգավորման խնդիրները, որոնց ուսումնասիրությանն էլ նվիրված է այս գլխի հաջորդ պարագրաֆը:

Ցանկացած պայմաններում նախընտրական քարոզչությունը պետք է դիտարկել որպես ընտրական իրավունքի բաղկացուցիչ մաս, որտեղ ավելի քան կարևորվում է հավասարության սկզբունքի պահպանման խնդիրը: Նախընտրական քարոզչության մեր օրենքում առկա մեխանիզմները բավականին կարճ պատմություն ունեն: Նախընտրական քարոզչությունը, նախ և առաջ, քաղաքական պլուրալիզմի արդյունք է և անհամատեղելի է միակուսակցական հավակարգի հետ:

Նախընտրական քարոզչության փուլի նորմատիվ իրավական կարգավորումը վերջինիս օրինական և հավասար պայմաններում անցկացնելու նախապայմաններից մեկն է, քանզի այստեղ կարևորվում է նաև նախընտրական քարոզչության սուբյեկտների կամքը:

Օրենսդրությամբ մի շարք սուբյեկտների նախընտրական քարոզչության իրավունքից մասամբ կամ ամբողջությամբ զրկելը չպետք է դիտարկել որպես իրավունքի սահմանափակում: Դա առավելապես ուղղված է ընտրությունների այս փուլում թեկնածուների միջև հավասարության պահպանմանը, և այս փուլը, ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ տարբեր կլանների ազդեցությունից զերծ պահելուն:

Այստեղ, սուբյեկտների որոշարկումից զատ, առանձնահատուկ նշանակություն են ձևեր բերում նախընտրական քարոզչություն սկսելու, ավարտելու, դրա անցկացման ձևերի և մեթոդների, ինչպես նաև հսկողական մեխանիզմների համակողմանի և մանրակրկիտ կարգավորման խնդիրները: Այս առումով, թերևս, իմաստ ունի մեզանում մասնագիտացված դատարանների ստեղծումը: Ընտրությունների այս փուլը կազմակերպող մասնագիտացած մարմինների ստեղծման անհրաժեշտության օգտին են խոսում վերջին տարիներին մեզանում անցկացվող ընտրությունների փորձի ուսումնասիրությունները:

Եթե 20-րդ դարի ընտրական իրավունքը բնութագրվում է հանրահայտ սկզբունքների ներդրմամբ, ապա, մեր կարծիքով, 21-րդ դարի ընտրական իրավունքի բնութագրման կարևորագույն չափանիշներից են լինելու ընտրությունների ֆինանսավորմանը օրենսդրությամբ տրված ժողովրդավարական լուծումները: Հաշվի առնելով այս հանգամանքը, սույն գլխի վերջին պարագրաֆը նվիրվել է ընտրությունների ֆինանսավորման հիմնահարցին:

Հունական ընտրությունները գնահատող Պերիկլեսի այն միտքը, որ ընտրությունների ժամանակ հաղթում են ոչ թե արժանիները, այլ հարուստները, իր արդիականությունը որոշ առումով չի կորցրել նաև մեր օրերում: Սրանով է պայմանավորված ընտրությունների ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունների ճիշտ և համակողմանի կարգավորման անհրաժեշտությունը, որը պետք է բացառի ֆինանսական միջոցների վճարող ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա: Այս հիմնահարցերի լուծման համար, թեև, անհրաժեշտ է անցնել ընտրությունների քացարձակ պետական ֆինանսավորման: Ասկայն, անգամ բյուզնի ճեղքվածք չունեցող պետության համար, այն ֆինանսական լուրջ դժվարություն կառաջացնի: Ուստի, կիրառելով ֆինանսավորման խառը եղանակը, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք կնվազեցնեն ֆինանսական միջոցների ազդեցության չափը ընտրության արդյունքների վրա: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է սահմանել նախընտրական հիմնադրամների առավելագույն չափը, մոծուվներ կատարող սուբյեկտներին և թույլատրելի ծավալները: Այս կերպ ընտրության այս փուլը հնարավորինս կպաշտպանվի ինչպես պետության, այնպես էլ տարբեր ֆինանսական կլանների ուղղակի ներգործությունից: Դրա հետ մեկտեղ ընտրությունների ֆինանսավորման մեխանիզմներում անհրաժեշտ է ամրագրել հրապարակայնության և թափանցիկության առավել խորը մեխանիզմներ:

Ընտրությունների ֆինանսավորման հետ կապված հարաբերություններում առանձնահատուկ նշանակություն ունեն ընտրական գրավները: Դրանց բարձր չափադրումները կարող են հանդես գալ որպես գույքային ցենզ, պասիվ ընտրական իրավունքի իրականացման նախապայման, որից դեռևս դարասկզբին հրաժարվել են բոլոր ժողովրդավարական պետությունները:

Ընտրությունների արդյունավետ կազմակերպման նախապայմաններից մեկը ընտրական հանձնաժողովների ֆիսկալ անկախությունն է: Չնայած ՀՀ նոր ընտրական օրենսդրությամբ այս ոլորտում կատարված որոշ դրական տեղաշարժերի, հիմնահարցը ամբողջությամբ լուծված չէ:

Երրորդ գլխում, («Ընտրական հանձնաժողովների դերը ընտրություններին քաղաքացիների մասնակցության ապահովման հարցում»), որը քաղկացած է 2 պարագրաֆներից, քննարկվում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովող պետական մարմինների ընտրական հանձնաժողովների հետ կապված խնդիրները:

Այս գլխի առաջին պարագրաֆում ուսումնասիրվում են ընտրական հանձնաժողովի աշխատանքներին քաղաքացիների մասնակցության ձևերն ու եղանակները: Մասնակցությունն ուղղակիորեն կապված է հանձնաժողովների ձևավորման կարգի հետ, սակայն, անկախ ձևավորման եղանակից, ընտրական հանձնաժողովները պետք է առաջնորդվեն օրինականության սկզբունքով, և իրենց գերխնդիրը պետք է լինի ընտրական իրավունքի իրականացման ապահովումը, օրինականության գերադասումը նեղ կուսակցական շահերից: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությունը, հանձնաժողովների ձևավորման հիմքում դնելով կուսակցական սկզբունքը, միաժամանակ հանձնաժողովների անդամների փոփոխման հնչուացված մեխանիզմներ ամրագրելով, կարծես թե շեղվել է վերոշարադրյալ տրամաբանությունից: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված մեխանիզմները չեն նրաշխարհում պետության որպես ընտրական իրավունքի իրականացումը ապահովող մարմին հանդիսանալու սկզբունքը:

ՀՀ ընտրական օրենսդրությունը սահմանում է նաև ընտրական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցելու որոշ այլ եղանակներ, որոնց նպատակը ընտրությունների ընթացքում հասարակական հսկողություն սահմանելն ու հրապարակայնությունն ապահովելն է: Դրանց շարքին են դասվում վստահված անձանց, տեղական և միջազգային դիտորդների ինստիտուտները: Այս ինստիտուտների, հատկապես վերջինի, ինչպես նաև հանձնաժողովների աշխատանքներին զանգվածային լրատվական միջոցների մասնակցության ամրագրումը վերջին պառլամենտական ընտրությունների ժամանակ հրապարակայնության և թափանցիկության նոր աստիճան ապահովեցին:

Սույն գլխի հաջորդ պարագրաֆում ուսումնասիրվում են ընտրական հանձնաժողովների որպես քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը ապահովող սարմինների գործառնություն ամկա հիմնահարցերը: Չնայած այն հանգամանքին, որ ընտրական իրավունքի իրականացման ընթացքում որոշակի լիազորություններ ունեն պետական այլ մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները, այնուամենայնիվ, ընտրական իրավունքի իրականացումը ապահովող այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են՝ ընտրատարածքների սահմանումը, թեկնածուների գրանցումը, ընտրողների ցուցակների կազմման հսկողությունը, նախընտրական քարոզչության փուլում հավասար պայմանների ապահովումը, քվեարկության կազմակերպումը, ընտրությունների արդյունքների ամփոփումն ու հրապարակումը, պատկանում են ընտրական հանձնաժողովներին: Ընտրական հանձնա-

ժողովների կողմից ինչպես այս գործառնությունների իրականացման, այնպես էլ այլ պնդումներ և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ընթացքում աշխատանքներ խնդիրներ, որոնց լուծման համար, բացի օրենսդրական շտկումներից, անհրաժեշտ է որոշակի ժամանակ ընտրական հանձնաժողովներին իրենց աշխատանքներում հմտանալու և մեզանում ժողովրդավարական ընտրությունների գաղափարի արմատավորման համար:

Չորրորդ գլխում («Քաղաքացիների ընտրական իրավունքի պաշտպանությունը»), որը բաղկացած է նրկու պարագրաֆներից, հետագուտվել են ընտրական իրավունքի իրականացման ընթացքում աշխատանքային ինստիտուտները, նորմերը, դրանց առջև կանխարգելիչ խնդիրները:

Ցանկացած կատարյալ ընտրական օրենսդրություն իմաստ ունի այնքանով, որքանով կան վերջինիս պաշտպանությունը ապահովող մարմիններ ու գործող մեխանիզմներ: Այդ իսկ պատճառով, ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է պաշտպանության մեխանիզմների կատարելիությունը, քանզի այդ մեխանիզմները մեր օրերում ժողովրդավարական պետության ու ընտրությունների չափանիշ են: Այդ մեխանիզմների հատկանշումը մեզանում պայմանավորված է նաև ընտրական իրավունքի օրենսդրորեն ամրագրման մեխանիզմների, մինչև կյանքի կոչվելը, ուղիղ ճանապարհով չանցնելու մեծամասշտաբ դրսևորմամբ:

Այս գլխի առաջին պարագրաֆում վերլուծվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ընտրական իրավունքի պաշտպանության բնագավառում: Առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվում Հանրապետության Նախագահի կողմից Ազգային ժողովի ընտրությունները նշանակելու լիազորությանը, Ազգային ժողովի կողմից ընտրությունների նորմատիվ կարգավորմանը, կառավարության կողմից ընտրությունների ֆինանսավորմանն ու ընտրությունների բնակաչեն ընթացքի ապահովմանը, սլատիժ իրականացնող հաստատություններում կազմակերպվող ընտրությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից հսկողություն իրականացնելու լիազորությանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընտրողների ցուցակների կազմմանը:

Ընտրական իրավունքի պաշտպանության համակարգում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լրացնող գործառնություններն հասարակական կազմակերպությունները: Հասարակական կազմակերպությունների այս գործառնությամբ պետք է զիտարկել որպես պետության ներսում ընտրական իրավունքի պաշտպանության

համակարգի բաղկացուցից մաս: Շնայած մեր օրերում այս ոլորտում հասարակական կազմակերպությունների առկա դերակատարության ոչ բարձր արդյունավետությանը, այնուամենայնիվ, դրական տեղաշարժ պետք է համարել ընտրական իրավունքի պաշտպանություն իրականացնող հասարակական կազմակերպությունների գոյությունն ու ընտրական օրենսդրության մշակմանը նրանց մասնակցությունը:

Սույն գլխի հաջորդ պարագրաֆում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի դատական պաշտպանության մեխանիզմները և տրվում վերջիններին կատարելագործման հետաքննարկում և ցանկալի ուղիները: Ընտրական իրավունքի ներպետական պաշտպանության ամբողջ համակարգն, իր ծավալներով հանդերձ, չի կարող համեմատվել անկախ դատական իշխանության կողմից իրականացվող պաշտպանության էետ: Ընտրական իրավունքի պաշտպանության մեխանիզմներն էականորեն տարբերվում են այլ իրավունքների համար նախատեսված դատական պաշտպանության մեխանիզմներից: Ընտրական իրավունքի դատական պաշտպանության մեխանիզմների առանձնահատկությունները, նախ և առաջ, պայմանավորված են վերջինիս հանրային բնույթով և սուբյեկտների ընդգրկումայնությամբ: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն այլ իրավունքների պաշտպանության համար նախատեսված մեխանիզմների, այստեղ միայնաց լրացնող գործառնություններ ունեն ընդհանուր իրավասության դատարանները և սահմանադրական դատարանը:

Դատարանները, ընտրական վեճերը քննելիս, պետք է հստակ պատկերացնեն, որ ընտրական իրավունքի ցանկացած խախտում իշխանության գավթման փորձ է և պետք է որակվի որպես ծանր հանցագործություն:

Հայաստանի Հանրապետության նոր ընտրական օրենսդրությամբ այս ոլորտում կատարված փոփոխությունները պետք է համարել առաջընթաց, սակայն՝ ոչ բավարար: Ընտրական իրավունքի դատական պաշտպանության կատարելագործման առումով, որոշ դեպքերում անհրաժեշտ են սահմանադրական փոփոխություններ:

Ամփոփման մեջ համակարգված ձևով տրվում են ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների համակարգված ներահանգումները:

Ատենախոսության Հիմնական դրույթները արտացոլվել են հետևյալ հրապարակումներում

1. Հ. Թովմասյան. Հան հիմնախարցնր, կան լուծումներ // Օրնր և իշխանություն ոգևտոսս 1997թ. N.8.
2. Հ. Թովմասյան. Համամասնական թն մեծամասնական ընտրական համակարգ // Օրնր և իշխանություն 1998թ. N.3.
3. Հ. Թովմասյան. Նախագահական ընտրություններ (համեմատական վերլուծություն) // Օրնր և իշխանություն 1998 թ. N. 2(21-22).

Графр Варданович Товмасян

Проблемы реализации избирательных прав граждан Республики Армения

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12 00. 02. Публичное право (конституционное право, административное право, финансовое право).

Защита состоится 1 июля, 2000г.

По адресу: г. Ереван-49, Алек Манукиан 1

РЕЗЮМЕ

Диссертация посвящена одной из основополагающих проблем государства, политической системы, конституционного права - проблеме реализации избирательного права граждан. Отстраненность Армении от завоеваний в области государственедения и права не дала возможности оценить место и значение красугольного камня демократии -- выборов. Изменения, происшедшие в общество-но-политической жизни 90-ых гг, поставили перед

обществом и государством свои требования, касающиеся необходимости осуществления принципиальных изменений в системе избирательного права. Граждане Армении, пусть медленно, но превращались из объекта политики в субъект политики. Процесс замедлялся отсутствием опыта проведения демократических выборов, несовершенным избирательным законодательством, нечеткостью избирательных механизмов, низким уровнем политической культуры и политической воли. Вышеупомянутые факторы, замедляя развитие механизма избирательной системы, стали серьезным препятствием для дальнейшего развития общества. Настоящее исследование имеет цель показать, что решение проблем в этой области тесно связано с реализацией избирательных прав граждан и крайне актуально, учитывая всю важность последних для развития других демократических институтов. В то же время, исследования показывают, что проблемы в данной области составляют целую систему и их решение требует от всех членов общества максимальной отдачи и усилий. Здесь, прежде всего, надо отметить необходимость научно обоснованного уточнения избирательной политики, совершенствования избирательного законодательства, повышения политической культуры, воли властей для проведения справедливых выборов.

В работе, учитывая большой объем обсуждаемых проблем, сделана попытка уточнить, сгруппировать проблемы данной области и указать определенные пути их решения.

На данном этапе злободневными становятся следующие суждения:

- искоренить порочную практику формирования властей не политическим методом, и сделать святыней принцип формирования властей путем выборов;
- неприкосновенность избирательного права должна осознаться всеми членами общества;
- несмотря на провозглашение принципа всеобщего избирательного права, механизмы его реализации несовершенны;
- высокий процент абсентеизма может поставить под сомнение вопрос легитимности властей;
- в условиях отсутствия состязательности и альтернативы никакое мероприятие не может считаться выборами;
- любая зависимость реализации пассивного избирательного права гражданина от какого-либо государственного органа или органа местного самоуправления недопустима;

предвыборная агитация-это результат политического плюрализма, свободного состязания политических взглядов с целью убедить избирателей отдать свои голоса в пользу того или иного кандидата;

недопустимо использование финансовых средств в качестве рычага при проведении выборов. Оборот финансовых средств в процессе выборов должен быть открытым, прозрачным, контролируемым;

избирательные комиссии, при любом порядке формирования, должны рассматриваться как государственные органы, обеспечивающие реализацию избирательного права граждан. Недопустимо подчинение законности партийным интересам;

функции государственных органов, органов местного самоуправления, общественных организаций при организации и проведении выборов надо рассматривать как отдельные элементы системы, гарантирующие реализацию избирательных прав граждан.

Самые совершенные принципы и механизмы, закрепленные в избирательном законодательстве, могут превратиться в фарс, если нет действенных органов и механизмов, защищающих эти принципы и механизмы. Ни один институт или механизм в этой сфере не может сравниться по своей эффективности с судебной системой.



РЕЗЮМЕ

59 02 2013



105 80 20